

ԿԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ Է

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿԵՐԸ ՍԿՍԵԼ ԵՆ ԱԿՏԻՎԱՆԱԼ

Կ

երջին ամիսներին հայկական բանկերը նկատելի ակտիվություն են հանդես բերում տնտեսության վարկավորման ուղղությամբ, ինչը տնտեսության մեջ առկա որոշակի դրական սպասումների անմիջական արդյունք է: Նման ակտիվությունը, բնականաբար, ուղեկցվում է տոկոսադրույքների նվազեցմամբ՝ ընդհուպ հասցնելով դրանք գրեթե մինչճգնաժամային մակարդակի: Մինչ բանկերի մի մասը տոկոսադրույքների նվազեցմանը գնում է բավական զգուշավոր քայլերով, մյուսներն ավելի համարձակ են՝ համոզված լինելով, որ հետճգնաժամային «հարմար առիթը» պետք է օգտագործել շուկայում ավելի ամուր դիրքեր զբաղեցնելու համար:

ՇՐՋԱՆՑԵԼԸ ԲԱՎԱՐԱՐ ՉԷ

Նախ պետք է նկատել, որ Հայաստանի բանկային համակարգին մեծ հաշվով հաջողվեց խուսափել լուրջ ցնցումներից, եթե հաշվի առնենք, որ սնանկացումներ տեղի չունեցան: ԿԲ նախագահ **Արթուր Ջավադյանը** այն կարծիքին է, որ դա մեծ մասամբ հնարավոր եղավ իր դեկավարած կառույցի իրականացրած խիստ նորմատիվային քաղաքականության շնորհիվ: «Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ բանկային համակարգի վրա իր որոշակի ազդեցությունն ունեցավ միայն 2008թ. 4-րդ եռամսյակից: Այնուամենայնիվ, Հայաստանի բանկային համակարգը զերծ մնաց լուրջ խնդիրներից, ինչին էսպես նպաստել է կարգավորման և վերահսկողության համեմատաբար խիստ մակարդակը»,- ասում է պրն. Ջավադյանը: Նրա հավաստմամբ՝ առաջիկայում ևս ԿԲ-ն պահպանելու է խստության անհրաժեշտ մակարդակը, և նորմատիվների մեղմացում (ինչը, որոշ տեսակետների համաձայն, ներկայում անհրաժեշտ է ֆինանսական շուկային հավելյալ ակտիվություն հաղորդելու համար) չի լինելու:

Չնայած ակնհայտ «ճգնաժամային տեղաշարժերի» բացակայությանը, որոշակի գործարքներ բանկային համակարգում, այնուամենայնիվ, տեղի ունեցան, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով կարելի է կապել ճգնաժամի հետ, օրինակ՝ «Անելիք» բանկի՝ 51% բաժնեմասի վաճառքը լիբանանյան «Կրեդիտ» բանկին: Խոսակցություններ եղան նաև «Կասկադ» բանկի վաճառքի հնա-

րավորության մասին, որոնք, սակայն, ավելի ուշ սառեցին. սպառնալից ըստ առկա տեղեկությունների, հավանական գնորդի հետ անհաջող բանակցություններն են եղել:

Մյուս կողմից, սակայն, նման երևույթները բնորոշ են նաև տնտեսական զարգացման վերելքի փուլին: Բայց միևնույն է, Հայաստանի փոքր շուկայի համար 22 բանկը, ինչ խոսք, շատ է, և վաղ թե ուշ մենք ականատես ենք լինելու ձեռքբերումների և միաձուլումների: Այս տեսակետին համամիտ է նաև «Ամերիաբանկի» տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն **Արտակ Հանեսյանը**՝ կարծիք հայտնելով, թե Հայաստանի

Հիմա բանկերի համար ամենակարևոր հարցի պատասխանը հետևյալն է. մի քիչ էլ սպասել, թե՞ արդեն ժամանակն է շուկա նետվել:

բանկային շուկայի համար ունիվերսալ ծառայություններ մատուցող բանկերի օպտիմալ քանակը 6-7-ն է, որոնցից բացի, իհարկե, կարող են գործել այս կամ այն ուղղվածությամբ մի քանի այլ բանկեր ևս: Բայց ներկայիս քանակը, ըստ նրա, ենթակա է կրճատման՝ կլանումների և միաձուլումների միջոցով:

Բանկերի՝ «նորմալից ավել» քանակը, մյուս կողմից, ենթադրում է մրցակցության բարձր մակարդակ: Իրականում, սակայն, մեր ոչ բոլոր բանկերն են առաջնորդվում մրցակցության գաղափարախոսությամբ՝ հանդես բերելով գզուշավոր և պահպանողական քաղաքականություն, այսինքն՝ ասպվինում են ավելի

քիչ ռիսկային մարտավարությանը: Ավաճը տեղին է առնվազն բանկերից շատերում աննախադեպ գերիբացվելության բարձր մակարդակի ձևավորման տեսանկյունից, ինչը հիմնականում կապիտալը «քնեցնելուն» կամ անհամեմատ ցածր եկամտաբերությամբ ակտիվների վերածելուն նախապատվություն տալու հետևանք է: Նման վարքագծից բանկերի մեծ մասը չի հրաժարվում նույնիսկ հիմա, երբ ճգնաժամային վատագույն ժամանակները, մեծ հաշվով, հետևում են:

Եվ հիմա, երբ շուկայում ուղղակի կամ անուղղակի կերպով ի հայտ են գալիս վերականգնման նախանշաններ, բանկերի համար ամենակարևոր հարցը հետևյալն է. մի քիչ էլ սպասել, թե՞ արդեն ժամանակն է շուկա նետվել:

Այդ հարցին պատասխանելու համար, ինչ խոսք, բանկերից յուրաքանչյուրը յուրովի վերլուծում է շուկան և դրա վրա ազդող բազմաթիվ գործոնները: Ու թերևս գաղտնիք չէ, որ ամենակարևոր գործոնների շարքում են տնտեսական սպասումները՝ ինչպես բիզնեսի, այնպես էլ հասարակության առավել լայն շերտերի շրջանում. ինչո՞ւ չէ, նաև պետության մակարդակով:

ՄՊԱՍՈՒՄՆԵՐՆ ԵՆ ՈՐՈՇՈՐԸ

Սպասումների վերաբերյալ բավական հետաքրքիր տեղեկատվություն են հրամցում ԿԲ-ի կողմից յուրաքանչյուր եռամսյակ հրապարակվող Բաղադրյալ տնտեսական ինդեքսները, որտեղ ներկայացվում են ընդհանուր տնտեսական ակտիվությունը և գործարար շրջանակների տնտե-

ՀԱՄԱՐԻ ԹԵՄԱ ■► ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ Է ►

սական սպասումները՝ ի դեմս Տնտեսական ակտիվության ինդեքսի (ՏԱԻ) և Գործարար միջավայրի ինդեքսի (ԳՄԻ): Առաջինը ներկայացնում է կազմակերպությունների առևտրաշրջանառությունը, աշխատավարձերի մակարդակը և այլ ցուցանիշների ամբողջությունը,


իսկ մյուսը՝ գործարարների սուբյեկտիվ սպասումներն ընթացիկ և առաջիկա եռամսյակի վերաբերյալ:

Եթե հավատանք այդ հրապարակման մեջ արտացոլված տեղեկատվությանը, ապա բանկերը սպասելուն ժամանակ չպետք է տրամադրեն: Այսպիսով՝ ըստ նշված

փաստաթղթի վերջին՝ 3-րդ եռամսյակի հրապարակման, վերջին երկու եռամսյակներում և հատկապես այս տարվա 3-րդ եռամսյակում նկատելի առաջընթաց կա երկու ինդեքսների մասով էլ (աղյուսակ 1 և 2): Եվ չնայած և՛ ՏԱԻ-ն, և՛ ԳՄԻ-ն տարեկան կտրվածքով 100%-ից փոքր են, այնուամենայնիվ, եռամսյակային կտրվածքով պատկերը հակառակն է. ՏԱԻ-ն այս տարվա 2-րդ և 3-րդ եռամսյակներին աճել է համապատասխանաբար 18,3 և 9%-ով, իսկ ԳՄԻ-ն՝ 12 և 25,9%-ով: Կարճ ասած՝ այս ցուցանիշները հուշում են տնտեսության մեջ առկա դրական գործընթացների մասին:

Եթե դիտարկենք տնտեսական ակտիվությունը բնորոշող ամենամասնավոր ցուցանիշը՝ ՀՆԱ-ն, ապա այստեղ թերևս քիչ բան կա ասելու: Թեև հունվար-սեպտեմբերին արձանագրված տնտեսական անկումը 0,1%-ով պակաս է հունվար-օգոստոս ամիսներին արձանագրվածից, իսկ վերջինս էլ՝ ճիշտ այդքանով հունվար-հուլիսից (համապատասխանաբար՝ 18,5%, 18,4% և 18,3%), այնուամենայնիվ, 0,1%-ը շատ փոքր ցուցանիշ է ընդգծված դրական միտում արձանագրելու համար: Դրանով կարելի է փաստել միայն տնտեսական անկման տեմպի հետագա թուլացման մեծ հավանականությունը: Իրականում, սակայն, ՀՆԱ-ի աճի տեմպը ժամանակային որոշակի խզվածություն ունի, որը Հայաստանի դեպքում գնահատվում է 6-9 ամիս: Այսինքն՝ կարելի է արձանագրել, որ մեր երկրի տնտեսության համար վատագույն ժամանակները, ներկայիս տնտեսական ճգնաժամի համատեքստում, եղել են 2008թ. վերջին և 2009թ. առաջին եռամսյակները: Այս եզրակացությունը համապատասխանում է նաև ՏԱԻ-ի և ԳՄԻ-ի՝

Գործարար միջավայրի և տնտեսական ակտիվության ինդեքսները եռամսյակային և տարեկան կտրվածքով 2008-2009 թթ., %



ՏԱԻ-ն հաշվարկվել է թողարկման ծավալների (ընթացիկ և գալիք եռամսյակ), արտադրանքի կամ ծառայությունների նկատմամբ պահանջարկի և պաշարների (գալիք եռամսյակ) վերաբերյալ կազմակերպությունների պատասխանների հիման վրա: ԳՄԻ-ն հաշվարկվել է ռիսկերի (ընթացիկ և գալիք եռամսյակ) և ենթաճյուղի տնտեսական վիճակի (ընթացիկ և գալիք եռամսյակ) վերաբերյալ կազմակերպությունների պատասխանների հիման վրա: Ցուրաբանչյուր հարցի համար հաշվարկվել են պատասխանների դիֆուզիոն ինդեքսներ, որոնց միջինացման արդյունքում ստացվել է ԳՄԻ-ն:

Չնայած և՛ Տնտեսական ակտիվության ինդեքսը, և՛ Գործարար միջավայրի ինդեքսը տարեկան կտրվածքով **100%**-ից փոքր են, այնուամենայնիվ, եռամսյակային կտրվածքով դրանցից առաջինը 2009թ. **2-րդ և 3-րդ** եռամսյակներին աճել է համապատասխանաբար **18,3** և **9%**-ով, իսկ երկրորդը՝ **12** և **25,9%**-ով, ինչը հուշում է տնտեսության մեջ առկա դրական գործընթացների մասին:

նշված ժամանակաշրջանների ցուցանիշների տրամաբանությանը:

Իհարկե, մակրոտնտեսական ցուցանիշներն ու գործարարների շրջանում արված հարցումների արդյունքները կարևոր են, բայց բանկերն ունեն նաև սեփական հաշվարկները տնտեսական վիճակի հնարավոր զարգացումների վերաբերյալ:

Օրինակ՝ «Ամերիաբանկը» կազմում է բանկի ռազմավարությանը համապատասխանող գործունեության տարեկան ծրագիր, որին էլ, իրենց հերթին, համապատասխանեցվում են տվյալ ֆինանսական տարվա ընթացքում իրականացվող գործողությունները: «Ամերիաբանկի»

հաշվարկները վկայում են տնտեսության առողջացման ակնկալիքների մասին: «Մեր հաշվարկներով՝ տնտեսությունը հստակ դրական դինամիկա կցուցաբերի այս տարվա վերջին և մյուս տարվա սկզբին: Մենք արդեն հասել ենք հատակին, այսինքն՝ ավելի վատ չի լինի: Սակայն չի բացառվում նաև որոշակի ստագնացիոն շրջանը, որը կարող է ձգվել մինչև տարեվերջ կամ մի փոքր էլ ավելին, որին աստիճանաբար կհաջորդի վերելքը: Դրական գործընթացները տնտեսական ակտիվության մասով արդեն իսկ նկատելի են, սակայն ՀՆԱ-ում արտացոլվելու համար պետք է հաղթահարել ժամանակային լազը: Այնուամենայնիվ, նոր ֆինանսական տարում մեր հաշվարկներով՝ ՀՆԱ-ի աճը միջինը կկազմի 0-1%, անշարժ գույքի գների աճը կկազմի շուրջ 5%, դոլարի փոխարժեքը կլինի ՀՀ ԿԲ կողմից դեռ սույն թվականի մարտին նախանշված միջակայքում, իսկ գնաճը կկազմի 8%»,- իրենց բանկի հաշվարկներն է ներկայացնում Արտակ Հանեսյանը:

Ի տարբերություն «Ամերիաբանկի» իր գործընկերոջ, «ՎՏԲ-Հայաստան բանկի» գլխավոր տնօրեն **Վալերի** Օվսյաննիկովը դժվարանում է հստակ պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք մեր տնտեսությունը հասել է հատակին, թե՞ դեռ ոչ: «Տվյալ հարցի պատասխանը ներկայումս շատերին է հուզում, բայց դեռ ոչ ոք չի կարողացել հստակ պատասխանել: Լավատեսությունը վարքի առավել կոնստրուկտիվ մոդելներից է, բանի որ բոլոր ցանկությունները վաղ թե ուշ դառնում են ծրագրեր, իսկ ծրագրերը՝ գործողություն»,- ասում է նա:

Երկրի ներսում ձևավորվող սպասումներից զատ, բանկերը հաշվի են առնում նաև արտաքին շուկաներում տեղ գտնող իրադարձությունները: Օրինակ՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» գլխավոր գործադիր տնօրեն **Թիմ Սլեյքերը** ասում է, որ Հայաստանի տնտեսության մասով սպասումները զգալիորեն աճանցվում են Ռուսաստանի տնտեսության մեջ տեղ գտնող զարգացումներից: «Մենք ուշադիր պետք է հետևենք Ռուսաստանին և նույն գործընթացներն ակնկալենք մեր տնտեսության մեջ 3-6 ամիս խզվածքով»,- ասում է Թիմ Սլեյքերը: Նա ևս ակնկալում է, որ չորրորդ եռամսյակում տնտեսական անկման ցուցանիշները կմեղմվեն, բայց մասամբ նաև շնորհիվ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցածր բազայի: Բացի «բնականոն գործընթացներից», ըստ սյրն. Սլեյքերի, Հայաստանի տնտեսության վրա կարող են ազդել նաև այնպիսի «չնախատեսված» գործոններ, ինչպիսին հայ-թուրքական սահմանի հնարավոր բացումն է: Այդ ազդեցությունը, ի դեպ, նա գնահատում է դրական և երկարաժամկետ:



Արթուր Զավադյան


ԿԲ Նախագահ

«Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը ՀՀ բանկային համակարգի վրա իր որոշակի ազդեցությունն ունեցավ միայն 2008թ. 4-րդ եռամսյակից: Այնուամենայնիվ, Հայաստանի բանկային համակարգը զերծ մնաց լուրջ խնդիրներից, ինչին էպպես նպաստել է կարգավորման և վերահսկողության համեմատաբար խիստ մակարդակը»:


ԲԵԿՈՒՄԸ ՇՈՒԼԻՍԻՆ ԷՐ

Վարկավորման ոլորտում բանկերի ակտիվությունը բավական հետաքրքիր ինդիկատոր է տնտեսության ակտիվության մասով: Բանկերը, սյրոֆեսիոնալ իմաստով լինելով ավելի իրազեկ և «մոտ կանգնած» ֆինանսատնտեսական գործընթացներին ու միտումներին, ինչպես երկրի ներսում, այնպես էլ դրսում, առավել ռացիոնալ կերպով են գնահատում շուկայական իրավիճակը: Այդ առումով կարելի է Հայաստանում ֆինանսատնտեսական ճգնաժամի

ՀՀ բանկային համակարգի բիզնես-վարկերի պորտֆելում դրամի և արտարժույթի տեսակարար կշիռների դինամիկան



ՀՀ բանկերի միջոցով զուտ ամսական վարկավորումը դրամով և արտարժույթով, մլն դրամ



Բանկային համակարգում բեկումնային պահը եղել է հուլիս ամիսը:

մեկնարկի և դրսևորման առանձնահատկությունների մասին դատողություններն անել՝ հենց հիմքում դնելով վարկավորման վիճակագրությունը:

Այսպիսով, վարկավորման ծավալների մասով բացասական միտումները մեր տնտեսությունում ի հայտ եկան 2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և ավելի սուր բնույթ ստացան հենց նոյեմբերից սկսած: Մասնավորապես, եթե 2008թ. առաջին 8 ամիսների ընթացքում յուրա-

քանչյուր ամիս բանկային համակարգի վարկային պորտֆելն աճում էր միջինը 24 մլրդ դրամով (աղյուսակ 2), ապա սեպտեմբերին այն կազմեց 18,9, հոկտեմբերին՝ 17,5, նոյեմբերին՝ 0,3 մլրդ դրամ, և այսպես շարունակ: 2009թ. հունվարին հայկական բանկերը 16 մլրդ դրամով ավելի շատ վարկային մարումներ ընդունեցին վարկառուներից, քան տվեցին: Ջուտ վարկավորման բացասական հաշվեկշիռ դրսևորվեց նաև փետրվա-

րին՝ -6,4 մլրդ դրամ, իսկ ահա մարտին տեղի ունեցավ առաջին հայացքից բոլորովին տարօրինակ մի բան, որը, սակայն, իր մեկնաբանությունն ունի: Մարտին հայկական բանկային համակարգի վարկային պորտֆելը, դրամով արտահայտված, աճեց 43 մլրդ դրամով կամ 6,5%-ով: Պատճառը մարտի 3-ի հայտնի դրամի արժեզրկումն էր, ինչի արդյունքում շուրջ 250 մլրդ դրամ ծավալով արտարժույթային վարկերը 20%-ով արժևորվեցին: Բայց այդ պարագայում բանկային համակարգի վարկային պորտֆելի արիեստական «ուռճացումը» այլ հավասար պայմաններում պետք է կազմեր 50 մլրդ դրամի կարգի, ինչը նշանակում է, որ մարտ ամսվա ընթացքում «արտահոսքը» կազմել է շուրջ 7 մլրդ դրամ: Ընդ որում, պետք է նկատել, որ դրամային արտահայտությամբ վարկերն աճել են ոչ միայն փոխարժեքի պարզունակ փոփոխության, այլև բանկերի կողմից դրամով արդեն իսկ տրամադրված վարկերը արտարժույթով վերածակերպելու հաշվին: Այդպիսի եզրակացության կարելի է գալ՝ դիտարկելով 2009թ. փետրվար-մայիս ժամանակահատվածի վիճակագրությունը: Մասնավորապես փետրվար ամսին, երբ ընդհանուր առմամբ զուտ տրամադրված վարկերի բացասական հաշվեկշիռը կազմել է -6,4 մլրդ դրամ, արտարժույթային վարկերը, ընդհակառակը, աճել են 13 մլրդ դրամով: Արտարժույթային վարկերի աճը պահպանվել է նաև հետագա ամիսներին՝ ընդհուպ մինչև մայիս, և միայն հունիսին է արձանագրվել արտարժույթով տրված վարկային պորտֆելի կրճատում: Իսկ ահա դրան հաջորդող ամիսներին արդեն արձանագրվել է արտարժույթային վարկերի աճ, որը մի փոքր ուշ ուղեկցվել է նաև դրամային վարկերի աճով: Մասնավորապես հուլիս ամսին գրանցվել է 22 մլրդ դրամ ծավա-

լով արտարժույթային վարկերի աճ և ընդամենը 0,7 մլրդ դրամ ծավալով դրամային վարկերի կրճատում, ինչն արդեն մյուս ամսին վերածվել է աճի: Բացարձակ թվով բանկային համակարգի վարկային պորտֆելն աճել է հուլիսին՝ 22 մլրդ դրամով: Այդ աճը պահպանվել է նաև օգոստոս և սեպտեմբեր ամիսներին՝ համապատասխանաբար 11,6 և 25,1 մլրդ դրամով: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ բանկային համակարգում բեկումնային պահը եղել է հուլիս ամիսը: Իսկ պարբերության սկզբում ասվածի տրամաբանությամբ՝ այս եզրակացությունը կարելի է տարածել նաև ողջ տնտեսության վրա:

ՕՐՅԵԿՏԻՎ ԵՎ ՍՈՒՔՅԵԿՏԻՎ ԳՈՐԾՈՆՆԵՐ

Այնուամենայնիվ, կան վարկավորման ակտիվությունը մեկնաբանող որոշակի սուբյեկտիվ գործոններ, որոնք ևս պետք է հաշվի առնել: Օրինակ՝ «Ամերիաբանկի» ղեկավարի կարծիքով՝ որպես վարկավորման ակտիվության վրա դրականորեն ազդող գործոններ հանդես են գալիս միջազգային ֆինանսական կառույցներից և ռուսական կառավարությունից ստացած վարկային միջոցները, գերմանա-հայկական հիպոթեկային ծրագիրը, սեզոնայնությունը՝ կապված ավանդաբար աշնանն ավելի շատ վարկային միջոցներ ներգրավելու՝ հայկական ընկերությունների սովորության հետ, ինչպես նաև գերիրացվելիության խնդիրը, որը վարկավորման ոլորտում որոշ բանկերի պասիվությամբ պայմանավորված՝ աստիճանաբար սրվում էր: Իսկ ընդհանուր առմամբ, պրն. Համեսյանը գտնում է, որ սխալ է միայն վարկատուին դիտարկել որպես ակտիվ կողմ՝ որպես ապացույց բերելով վերջին ամիսներին վարկառուների պրոակտիվ վարքագիծը՝ պայմանավորված նրանց ֆինան-

սական ցուցանիշների որոշակի բարելավմամբ և ապագայի նկատմամբ ունեցած դրական սպասումներով:

Նկատենք նաև, որ վարկավորման ակտիվության վրա որոշակիորեն ազդել է ԿԲ իրականացրած քաղաքականությունը, այդ թվում նաև վերաֆինանսավորման տոկոսադրույքների նվազեցումը: «Վերաֆինանսավորման տոկոսադրույքի 2,75 տոկոսային կետով նվազեցմանը զուգահեռ՝ ԿԲ-ն իրականացրել է ծավալային ակտիվ ընդլայնում: Վերջինի ներքո ընդլայնվել է դրամավարկային գործիքակազմը՝ ներառելով բանկերի հետ ավելի երկարաժամկետ (մինչև 3 ամիս ժամկետով) ռեպո համաձայնագրերի կնքումը, առևտրային բանկի կապիտալի համալրման դեպքում համալրված գումարի չափով, 5 տարի մարման ժամկետով, սուբորդինացված վարկերի տրամադրումը, առևտրային բանկերի միավորման դեպքում, մինչև 3 տարի մարման ժամկետով և միավորված կապիտալի 30%-ի չափով, սուբորդինացված վարկերի տրամադրումը: Միևնույն ժամանակ ընդլայնողական հարկաբյուջետային քաղաքականության իրականացմանը օժանդակելու նպատակով ԿԲ-ն ակտիվացրել է մասնակցությունը պետարժեթոթերի երկրորդային շուկայում, ինչպես նաև փոքր ու միջին ձեռնարկությունների, գյուղատնտեսության նպատակային վարկավորման և հիպոթեկային ու սպառողական վարկերի շուկան աշխուժացնելու նպատակով՝ կառավարության հետ կոորդինացված, իրականացնում է բանկային համակարգի վարկային պորտֆելի վերաֆինանսավորում՝ Ռուսաստանի Դաշնության, Համաշխարհային բանկի և Գերմանա-հայկական հիմնադրամի տրամադրած մեծածավալ վարկային ռեսուրսների հաշվին»,- ասում է ԿԲ նախագահ Արթուր Զավաղյանը:



Արտակ Հանեսյան

«Ամերիաբանկի»

տնօրինության նախագահ-գլխավոր տնօրեն

«Շատ հաճախորդներ մենք ներգրավել ենք իրենց իսկ բանկերի կողմից մերժված լինելուց հետո և կարծում ենք, որ «լավ ընկերը նեղ պահին է ծանաչվում» սկզբունքը մեզ համար կդառնա երկարաժամկետ ու արդյունավետ համագործակցության լավ պայման, իսկ մենք դրա համար վճարում ենք ռիսկով»:

Վերջինս նաև իր անհամաձայնությունն է հայտնում այն տեսակետին, թե ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքների հարցում «չափից շատ զգուշավոր» է գտնվել՝ նշելով, որ դրանք եղել են շուկայի զարգացումներին համահունչ: Ըստ ԿԲ գնահատումների՝ ներկայիս գործող 5% վերաֆինանսավորման դրույքաչափը, մակրոտնտեսական մի շարք ցուցանիշների գծով արդեն իսկ արձանագրված որոշակի կայունացման միտումների և դրանց հե-



Թիմ Սլեյթեր

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ֆայաստանի» գլխավոր գործադիր տնօրեն

«Մենք հիմա ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում բիզնեսի վարկավորմանը, իսկ խոշորածավալ արտարժույթային հաշիվների առկայությունը մեզ համար արտոնյալ պայմաններ է ստեղծում այս բնագավառում, և մենք վարկավորման լավ հնարավորությունները, անշուշտ, բաց չենք թողնի»:

տագա կանխատեսումների պարագայում, առավելագույնս կնպաստի տնտեսության հետագա արագ վերականգնմանը՝ չվտանգելով գների կայունությունը:

Ի դեպ, վարկավորման ոլորտում նկատվող ակտիվությունը «ՎՏԲ-Հայաստան բանկի» Վալերի Օվսյանի կողմից առավելապես պայմանավորում է շուկայում նշանակալի ծավալի դրամային միջոցների տեղաբաշխմամբ՝ մյուս կողմից մատնանշելով բիզնեսի՝ դեպրեսիայի շրջանից դուրս գալու և զարգանալու ցանկությունը:

Ի՞ՆՉ Է ՓՈԽՎԵԼ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կարծիք կա, որ ներկայիս ճգնաժամը բնորոշելու համար ամբողջ աշխարհում լայն կիրառություն գտած «ֆինանսատնտեսական» մակդիրը Հայաստանի դեպքում պետք է կիրառել «տնտեսաֆինանսական» ձևով, քանի որ, ի տարբերություն աշխարհի մեծ մասի, մեր երկրում ճգնաժամի առաջին հարվածի տակ հայտնվեց տնտեսության իրական հատվածը, որից ածանցվեց նաև ֆինանսականը: Չնայած դրան, աշխարհում և Հայաստանում ճգնաժամից ստացած դասերը շատ առումներով նույնն են: Օրինակ՝ բանկերն այժմ դարձել են ավելի գոյուշավոր և վարկավորման ժամանակ շատ ավելի մանրամասն են վերլուծում վարկավորման յուրաքանչյուր դեպք: Եվ ընդհանրապես, բանկերը որոշակի «վերախմաստավորումներ» են ներմուծել վարկավորման քաղաքականության մեջ:

Մասնավորապես, «Ամերիաբանկը» մեծացնելու է ակտիվությունը փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման մասով: Բանկի համար ՓՄՉ է համարվում մինչև 250 աշխատակից ունեցող կազմակերպությունը, որի տարեկան շրջանառությունը չի գերազանցում 15 մլն դոլարին համարժեք դրամը: Այս տվյալներն ունեցող և բանկի պայմաններին բավարարող ընկերությունները կարող են հավակնել մինչև 1,5 մլն դոլար կամ համարժեք ՀՀ դրամ ծավալով վարկերի: Իսկ ահա ոլորտային առումով այս բանկի հետաքրքրությունների շրջանակում են հայտնվել վերամշակող արտադրությունը և մանր ՀԷԿ-երը: Հատկապես վերջինի դեպքում, բանկի ղեկավարի պարզաբանմամբ, իրենց գրավել է կայուն եկամտի առկայությունը, ինչպես

նաև բիզնեսի քափանցիկության բարձր մակարդակը: Եվ հակառակը՝ «Ամերիաբանկում» հիմա ավելի քիչ ուշադրություն է հատկացվելու բնակարանային շինարարությանը:

«Ամերիաբանկի» հետ որոշակի նմանություններ ունի «ՎՏԲ-Հայաստան բանկը»՝ այս ուղղությամբ ձեռնարկած իր քայլերով:

«Հայաստանում ճգնաժամի դրսևորման հետ կապված՝ «ՎՏԲ-Հայաստան բանկը» աշխատում է վարկային պորտֆելի որակի բարձրացման վրա: Տվյալ աշխատանքն իրականացվում է բոլոր բիզնես գործընթացների կատարելագործման և կորպորատիվ հաճախորդների հետ համագործակցության օպտիմալացման ուղղությամբ: Բանկում իրականացվում է կենտրոնացված աշխատանք ժամկետանց պարտավորությունների գծով, վերանայվել են գնահատող կազմակերպությունների ընտրության և աշխատանքի նկատմամբ մոտեցումները, իրականացվում է մշտական աշխատանք վարկային մասնագետների մասնագիտական որակի բարձրացման ուղղությամբ»,- ասում է «ՎՏԲ-Հայաստան բանկի» գլխավոր տնօրեն Վալերի Օվսյանի կողմից:

Տնտեսական ճգնաժամը փոփոխություններ է մտցրել նաև այս բանկի «նախապատվություններում»՝ կապված վարկավորվող բիզնեսի չափերի հետ, և ներկայում այն ավելի շատ առաջնորդվում է կարճաժամկետ վարկավորման քաղաքականությամբ, քանի որ, ինչպես բանկի գլխավոր տնօրենն է ասում, այն տրվում է կարճ ժամկետով և աղյալի սով հեշտ հսկվող է նույնիսկ տնտեսական կտրուկ փոփոխությունների դեպքում: «Միշտ չէ, որ երկար ժամկետով հնարավոր է լինում պարզել վարկառուի վարկունակությունը:

Առանձին վարկային գործառնությունների ժամկետները որոշվում են վարկային ռիսկի միանմալացման անհրաժեշտությունից ելնելով: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի և կայունության պահպանման համար բանկը մեկ տարուց ավել կենտրոնացել է փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման վրա: Այդ շրջանակներում բանկը համագործակցում է ՎՋԵԲ-ի և Գերմանա-հայկական հիմնադրամի կողմից իրականացվող փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման ծրագրերի հետ: Մեզ հետաքրքրում է ցանկացած աշխատող բիզնես, որը ներկայիս դժվար տնտեսական պայմաններում ստեղծում է եկամուտ և պլանավորում եկամուտ: Մասնավորապես փոքր և միջին բիզնեսի ներքո մենք ենթադրում ենք տարեկան մինչև 500 մլն դրամ շրջանառություն ունեցող հաճախորդների, իսկ նրանց հասու ֆինանսավորման ծավալը վերը նշված ծրագրերի շրջանակներում հասնում է 100 հազար դոլարի: Վարկային պորտֆելի կառուցվածքը 2009թ. սկզբից շատ չի փոխվել: Բանկի համար առաջնային են մնացել արդյունաբերությունը և էներգետիկան (ամբողջ կորպորատիվ պորտֆելի 60%-ը): Աննշան կրճատվել են առևտուրը, տրանսպորտը և շինարարությունը՝ արտացոլելով ՀՀ տնտեսության մեջ առկա ընդհանուր միտումները»,- «ՎՏԲ-Հայաստան բանկի» վարկավորման ներկայիս մարտավարությունն է ներկայացնում բանկի ղեկավարը:

Ճգնաժամը որոշակի ճշգրտումներ է մտցրել նաև «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանի» վարկավորման քաղաքականության մեջ: Մասնավորապես, բանկը դադարեցրել է սպառողական վարկերի տրամադրումը՝ ավելի մեծ հակվածություն հանդես բերելով դեպի բիզնես-վարկավորումը:

«Այժմ մենք ավելի մեծ ուշադրություն ենք դարձնում բիզնեսի վարկավորմանը, իսկ խոշորաձավար տարածության հաշիվների առկայությունը մեզ համար արտոնյալ պայմաններ է ստեղծում այս բնագավառում, և մենք, անշուշտ, վարկավորման լավ հնարավորությունները բաց չենք բողմի»,- ասում է Թիմ Սլեյթերը: Ի դեպ, հոկտեմբերի վերջին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը» ՎՋԵԲի հետ 10 մլն դոլար արժեք ունեցող համաֆինանսավորման պայմանագիր կնքեց, որի շրջանակներում «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանը» կկարողանա ֆինանսավորել խոշոր վարկառու հանդիսացող իրավաբանական անձանց՝ իրենց բիզնեսն ընդլայնելու համար: Պատճառը նմանատիպ վարկավորումների երբեմն առաջացող սահմանափակումներն են ԿԲ կողմից սահմանված «Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն սահմանաչափ» նորմատիվով:

Որակական մյուս կարևոր փոփոխությունը վարկավորման բնագավառում արտարժույթային վարկերի տեսակարար կշռի մեծացումն է: Խոսքը վերաբերում է հիմնականում դոլարային վարկերին: Ընդհանուր առմամբ, անցած մեկ տարվա ընթացքում դրամով և արտարժույթով վարկերի տեսակարար կշիռը փոփոխվել է 15%-ով: Մասնավորապես ընդհանուր վարկային պորտֆելում դրամ/արտարժույթ հարաբերակցությունը 62/38-ից հասել է 47/53-ի: Իսկ միայն բիզնես վարկավորման մեջ այն 42/58-ից հասել է 71/29-ի:

ՏՈՎՈՍԱԳՐՈՒՅՔՆԵՐՆ ԷԼԻ ԿԸՆԿՆԵՆ

2009թ. 1-ին և 2-րդ եռամսյակներից բանկերի մեծ մասում վարկավորումը կա՛մ իսպառ դադարել էր, կա՛մ տրամադրվում էր 18-24%-ով: Վիճակագրության համաձայն՝ բանկերի կողմից տրամադրվող տոկոսադրույքները 3-րդ եռամսյակում նկատելիորեն նվազել են՝ շուրջ 2-3%-ով: Օրինակ՝ «Ամերիաբանկը», որն առանձնապես տոկոսադրույքներն իջեցնելու քիչ բան ուներ, այնուա-



Վալերի Օվսյաննիկով

«ՎՏԲ-Հայաստան բանկի» գլխավոր տնօրեն

«Միշտ չէ, որ երկար ժամկետով հնարավոր է լինում պարզել վարկառուի վարկունակությունը: Առանձին վարկային գործառնությունների ժամկետները որոշվում են վարկային ռիսկի միանմալացման անհրաժեշտությունից ելնելով: Վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի և կայունության պահպանման համար բանկը մեկ տարուց ավել կենտրոնացել է փոքր և միջին բիզնեսի ֆինանսավորման վրա»:

մը կա՛մ իսպառ դադարել էր, կա՛մ տրամադրվում էր 18-24%-ով: Վիճակագրության համաձայն՝ բանկերի կողմից տրամադրվող տոկոսադրույքները 3-րդ եռամսյակում նկատելիորեն նվազել են՝ շուրջ 2-3%-ով: Օրինակ՝ «Ամերիաբանկը», որն առանձնապես տոկոսադրույքներն իջեցնելու քիչ բան ուներ, այնուա-

մենայնիվ ներկայում վարկերը տրամադրում է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 1-1,5% ավելի էժան: «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանում» վարկերը տրամադրվում են խոշոր բիզնեսին՝ 12-15%, իսկ ՓՄՁ-ին՝ 14-20% տոկոսադրույքով: «ՎՏԲ-Հայաստան բանկը» սեփական միջոցների հաշվին վարկավորումն իրականացնում է 15-18%-ով և մինչև 3 տարի ժամկետով: Բացի դրանից, կորպորատիվ հաճախորդների համար ֆինանսավորում է ներգրավում արտերկրից՝ հնարավորություն ստեղծելով վարկի տոկոսադրույքը նվազեցնել մինչև 12%, իսկ վարկավորման ժամկետը հասցնել մինչև 5 տարի:

Բանկային համակարգի ներկայացուցիչները գրեթե համակարծիք են ասպագայում ևս վարկերի տոկոսադրույքների նվազման հարցում: Սակայն ընդգծված նվազումների մասին դեռևս վաղ է խոսել, եթե հաշվի առնենք որոշ հանգամանքներ: Օրինակ՝ «Ամերիաբանկի» տնօրենն այն կարծիքին է, որ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի իջեցումները, ինչ խոսք, որոշակի ակտիվություն հաղորդել են վարկավորման գործընթացին, բայց դա հիմնականում օգնել է բանկերին լուծել կարճաժամկետ իրացվելիության խնդիրներ: Սակայն որպես երկարաժամկետ վարկեր տրամադրելու համար հիմնական ռեսուրս դեռևս ծառայում են բնակչությունից ներգրավված ավանդները: Իսկ ավանդների տոկոսադրույքները, ինչպես գիտենք, 1-ին և 2-րդ եռամսյակներում որոշ բանկեր բավական բարձրացրեցին, և որոշակի ժամանա-

կահատված կպահանջվի, որպեսզի այդ թանկ ավանդներն «իրենց գինը հանեն»: Այդ ժամանակահատվածը, սրբ. Հանեսյանի գնահատմամբ, 6-9 ամիս է, ինչը նշանակում է, որ վարկերի տոկոսադրույքների ավելի լայնամասշտաբ նվազում կարելի է սպասել 2009թ. 4-րդ եռամսյակի վերջում և 2010թ. 1-ին եռամսյակի ընթացքում: Ասվածը հատկապես վերաբերում է այն բանկերին, որոնք դիմեցին բարձր տոկոսադրույքնե-

պատճառներից մեկն էլ հենց այն էր, որ բանկերն ամբողջ աշխարհում միջինը 1 միավոր սեփական կապիտալի հաշվով ներգրավել էին 20 միավոր փոխառու միջոցներ: Հայաստանում այդ հարաբերակցությունը միջինում 1/5 էր, իսկ ասիա մեր բանկում այն 1/1 էր և հիմա նոր վերածվում է 1/2-ի: Այսպիսի հնարավորությունները մեզ թույլ տվեցին և՛ պահպանել լույսությունը մեր հին հաճախորդների նկատմամբ, և՛ ներգրավել նորերին:

Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելում դրամ/արտարժույթ հարաբերակցությունը անցած մեկ տարվա ընթացքում **62/38**-ից հասել է **47/53**-ի, իսկ միայն բիզնես վարկավորման մեջ **42/58**-ից հասել է **71/29**-ի:

Շատ հաճախորդներ մենք ներգրավել ենք իրենց իսկ բանկերի կողմից մերժված լինելուց հետո և կարծում ենք, որ «լավ ընկերը նեղ պահին է ճանաչվում» սկզբունքը մեզ համար կդառնա երկարաժամկետ ու արդյունավետ համագործակցության լավ պայման, իսկ մենք դրա համար վճարում ենք ռիսկով»,- իրենց բան-

րով ավանդներ ներգրավելու քայլին: Բայց գտնվեցին նաև այնպիսիները, որոնք զնացին կապիտալի համարման ճանապարհով:

Գրանց թվում էր նաև «Ամերիաբանկը», որը, մինչ ճգնաժամը Հայաստանում «իր հունի մեջ կմտներ», կանոնադրական կապիտալի համարման միջոցով հասցրեց այդ ցուցանիշով Հայաստանում դառնալ առաջինը, ինչպես նաև ունենալ լեռնաբերի, այսինքն՝ ներգրավված միջոցների և սեփական կապիտալի հարաբերակցության ամենացածր մակարդակը: Սա հնարավորություն է տվել «Ամերիաբանկին» վարկավորման բնագավառում շարունակել մնալ համեմատաբար ակտիվ նույնիսկ ճգնաժամային ամիսներին: «Համաշխարհային ճգնաժամի

կի հաջողությունները չքաքցնելով՝ ասում է Արտակ Հանեսյանը: Ի դեպ, «Ամերիաբանկն» առաջատար է նաև վարկային պորտֆելի աճի տեմպերով, միայն 3-րդ եռամսյակում դրանք աճել են 40%-ով:

Լավ կլիներ, եթե բոլոր բանկերը հետևեին «Ամերիաբանկի» օրինակին, իհարկե, իրենց հնարավորությունների սահմաններում: Ինչ խոսք, յուրաքանչյուր տնտեսվարող, այդ թվում և բանկերը, առաջնորդվում են ռացիոնալ սպասումներով: Բայց մյուս կողմից պետք չէ մոռանալ «լայն օրերը», երբ ստեղծվել էին մեծ շահույթներ ստանալու լավ հնարավորություններ: Այդ ժամանակ շահույթի աղբյուրը վարկառուներն էին: Հիմա էլ նրանց է պետք ձեռք մեկնել: **BC**

Գևորգ Սահակյան